Известия АН Армянской ССР. Науки о Земле, 4, 3—11, 1969

Լ. Ա. ՍՎԱԴՅԱՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԵՐԿՐԱԲԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Բազմավաստակ երկրաբան-մանկավարժ, պրոֆեսոր Տիգրան Արշակի Ջրբաշյանը (1889—1937) Հայաստանի երկրաբանական ծառայության կազմավորման շրջանի այն նշանավոր գործիչներից է, որի չնայած շատ կարճատև, սակայն և շատ բեղմնավոր կյանքն ու գործունեությունը մեծ դեր են խաղացել հանրապետության երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների ուսումնասիրման, մասնագիտական կադրերի պատրաստման գործում։

Տիգրան Ջրբաշյանը հանդիսացել է Հայաստանի երկրաբանության մի քանի բնագավառների և ընդերքի մի շարք հարստությունների անդրանիկ հետազոտողն ու Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի հիմնադիրը։

Չնայած այդ հանգամանքներին մեծ երախտավորի մասին հրապարակի վրա չկա մի ընդհանրացնող ամփոփիչ աշխատություն։ Դեռ ավելին. ցավով պետք է նշել, որ Հայաստանի երկրաբանական մտքի զարգացման, երկրաբանական ծառայության և գիտության պատմության հարցերին նվիրված մի շարք աշխատություններում կամ մոռացության է տրվել նրա անունը, կամ այն ներկայացվել է կցկտուր կերպով, առանց պատշաճ գնահատման։

Ներկա հոդվածն այդ բացը լրացնելու մի համեստ փորձ է, հիմնված ինչպես արխիվային նյութերի, այնպես էլ նրա հետ մեր ունեցած կապի և համատեղ աշխատանքի որոշ դրվագների վրա։

Տիգրան Ջրբաշյանը ծնվել է 1889 թ. նոյեմբերի 9-ին (հ. ա.) Վանում, ծառայողի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստանում է Էրզրումի Սանասարյան վարժարանում և Վանի Երեմյան դպրոցում, իսկ այնուհետև փոխադրվում է Տփղիս, ուր սովորում և ավարտում է Ներսիսյան դպրոցը (1908—1912)։

1913—1918 թվականներին Տ. Ջրբաշյանը պաշտոնավարում է նախ Վանում, իսկ այնուհետև Տփղիսի հայկական դպրոցներում, դասավանդելով մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և բնագիտություն։

1918—1920 թվականներին Տ. Ջրբաշյանը սովորում է Տփղիսի համալսարանի բնագիտական ֆակուլտետում և միաժամանակ, որպես լաբորանտ աշխատում է պոլիտեխնիկական ինստիտուտի հանքաբանական կաբինետում պրոֆեսոր Գինզբերգի մոտ։

Հանքաբանական կաբինետի հարուստ «քարերի աշխարհը» նրա համար ունենում է բացառիկ ճակատագրական նշանակություն։ Նա որոշում է իրեն նվիրաբերել երկրաբանական գիտությանը և լեռնային գործին։

Այդ մղումով հակված 1920 թ. Տ. Ջրբաշյանը մեկնում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարանը։ Այստեղ նա լսում է ֆիզիկա-մաթեմատիկական գիտելիքների մի շարք դասընթացներ, ունկնդրում խոշորագույն գիտնականներ՝ Ալբերտ Էյնշտեյնին և Մարի Կյուրի-Սկլադովսկայային, այնուհետև փոխադրվում է Փարիզի լեռնային ինստիտուտը, որն ավարտում է 1924 թվականին բարձր գնահատականներով և ստանում լեռնային ինժեների կոչում։

Սակայն, Տիգրան Ջրբաշյանը չի բավարարվում իր ձեռք բերած գիտելիքներով և այն լրացնելու ու հարստացնելու համար շարունակում է ունկնդրել Սորբոնի համալսարանի մասնագիտացված դասընթացների (կիրառական երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, քարագիտություն, հետազոտման մեթոդները և այլն) առանձին բաժիններ, մասնակցում գործնական և լաբորատոր պարապմունքներին։ Ուսման կատարելագործման հետ զուգընաց նա միաժամանակ աշխատում է Փարիզի բնա-պատմական աշխարհահռչակ թանգարանի ականավոր երկրաբան ակադեմիկ Ա. Լաքուրայի ղեկավարությամբ հանքաբանական կաբինետում։

Շուտով, արտակարգ ընդունակ և բացառիկ տաղանդի տեր Տիգրանը դրսևորում է իրեն որպես լավագույն մասնագետի։ Նրան խորհուրդ են տալիս հաստատվել Փարիզում, առաջարկում մի շարք առաջավոր պաշտոններ, սակայն հայրենիքի կարոտը և հարազատ ժողովրդին ծառայելու նվիրական դաղափարը թելադրում են նրան վերադառնալ Հայաստան։

1925 թ. վերջերին Տիգրան Ջրբաշյանը Փարիզից վերադառնում է Երևան և 1926 թ. սկզբներին աշխատանքի է հրավիրվում պետական համալսարան, որպես բյուրեղագիտության, հանքաբանության և ընդհանուր երկրաբանության առարկաների դասախոս։

1929 թ. նրան շնորհվում է դոցենտի, իսկ 1933 թ.՝ պրոֆեսորի կոչում։

Սակայն, բաղմավաստակ երկրաբան-մանկավարժի անունը լայն ճանաչում է ստանում 1934 թվին, երբ նրա նախաձեռնությամբ համալսարանում ստեղծվում է երկրաբանական-աշխարհագրական ֆակուլտետ։ Նա նշանակվում է այդ ֆակուլտետի դեկան և միաժամանակ գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր։

1927—1937 թթ. ընթացքում պրոֆ. Տիգրան Ջրբաշյանը ծավալում է բեղմնավոր գործունեություն։ Այդ տարիներին դրսևորվում են նրա ոչ միայն գիտա-մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքի հիանալի կողմերը, այլև, վարչական և կազմակերպչական բացառիկ ունակությունները։ Նա մեծ ջանք և ուժ է գործադրում ֆակուլտետի և հատկապես երկրաբանական բաժնի ուսումնա-արտադրական և նյութա-տեխնիկական բազայի ընդարձակման, բարձրորակ կադրերի պատրաստման, Հայաստանում երկրաբանական ծառայության և գիտության ստեղծման ու զարգացման բնագավառներում։ Այդ բոլորի հետ միասին նա ծավալում է բեղմնավոր գիտա-հետազոտական աշխատանքներ։

Պրոֆ. Տիգրան Ջրբաշյանը նաև ակտիվ հասարակական գործիչ էր։ Նա երկու անգամ՝ 1930 և 1933 թվականներին ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի անդամ և երկու անգամ էլ՝ երկրաբանների համամիութենական երրորդ համագումարի [Տաշքենդ, 1928] և միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրեսի [Մոսկվա, 1937] պատգամավոր։

Բազմավաստակ երկրաբանը հանդիսացել է Հայաստանում երկրաբանական գիտելիքների առաջին տարածողներից մեկը։ Նա բազմիցս ելույթներ է ունեցել աշխատավորների առաջ՝ հանրապետության երկրաբանական կառուցվածքի, օգտակար հանածոների և հատկապես երկաթաշարժերի [Լենինական—1926, Գորիս—1931, Երևան—1937] հարցերին նվիրված զեկուցումներով։

1935 թ. Հայաստանի Կենտգործկոմը բարձր գնահատելով նրա գիտական, մանկավարժական և հասարակական ծառայությունները, նրան պարգևատրում է պատվոգրով։

Մեծ հայրենասերն ու լավագույն քաղաքացին, հայկական մշակույթին և իր գործին մինչև վերջ նվիրված ուսուցչապետը, սիրված ու հարգված էր բոլորից։ Խորոց հոգու, նրա մանկավարժական-երկրաբանական կյանքը շատ կարճատև եղավ, ընդամենը մեկ տասնամյակ։ Նա անհատի պաշտամունքի շրջանի զոհերից է, վախճանվել է 1937 թվին։

Մեծ երախտավորի պայծառ հիշատակը հավերժացնելու համար, 1966 թ. Երևանի պետական համալսարանի ընդհանուր երկրաբանության կաբինետը կոչվել է նրա անունով։

Բազմավաստակ մանկավարժ-երկրաբանի գործունեությանը կարելի է բաժանել երկու՝ գիտա-մանկավարժական և գիտա-հետազոտական բնագավառների։ Այդ բնագավառներում նրա ունեցած դերի, կատարած ստեղծագործ աշխատանքների և ծառայությունների բնութագրման շարադրանքը բերվում է ստորև։

Պրոֆ. Տիգրան Ջրբաշյանի գիտա-մանկավարժական գործունեությունը անխզելի կերպով կապված է Երևանի պետական համալսարանի պատմության հետ։ Նա դասախոսում է համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում և մանկավարժական ֆակուլտետի կենսաբանական բաժնում, իսկ հետագայում, մինչև 1936 թ. նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական և քիմիական ֆակուլտետներում։ Այսպիսով, եթե հաշվի չառնենք ընդհանուր երկրաբանության գծով մինչև այդ համալսարանում կարդացված ոչ սիստեմատիկ դասախոսությունները (Կ. Սավիչ-Զաբոլոտսկի, Ս. Տիգրանյան և Պ. Զամբարյան), ապա Տիգրան Ջրբաշյանը ամենայն իրավամբ հանդիսանում է

Երևանի համալսարանի (նաև հանրապետության) երկրաբանական մասնագիտությունների առարկայական-ծրագրային դասընթացների անդրանիկ դասախոսը։

Համապատասխան մասնագիտական դասախոսական կադրերի բացակայության պայմաններում, նա կարդում է ընդհանուր երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, քարագիտություն, հետազոտման մեթոդներ և այլ դասընթացներ։ Նրա գերող, շատ ուսանելի դասախոսությունների հաջողությունը հենվում էր մանկավարժական մեծ փորձի և ձիրքի, ինքնատիպ հնարքների, տեսական և գործնական դիտելիքների միասնության, նյութի կառարյալ տիրապետման և խոսքի վարպետության վրա։ Ի տարբերություն շատ դասախոսների, նա միշտ ներկա էր գտնվում իր կարդացած դասընթացների գործնական և լաբորատոր պարապմունքներին, որոնք մեծ հմտությամբ վարում էր նրա ասիստենտ Շ. Շատվորյանը։ Դրանով նա հետևում էր ոչ միայն կարդացած նյութի ուսուցման և յուրացման ընթացքին, այլև օգնում էր ասիստենտին և ուսանողներին, ելնելով իր մշակած մանկավարժական ինքնատիպ դպրոցի ստեղծագործական սկզբունքներից։

Նա համախմբում է իր շուրջը երկրաբանական ֆակուլտետի անդրանիկ դասախոսներ՝ ասիստենտ Շ. Շատվորյանին, պրոֆեսորներ Հովհ. Կարապետյանին, Հ. Հովհաննիսյանին, Ս. Լիսիցյանին, ավագ դասախոսներ Հ. Թեոդիրաշյանին, Հ. Ստեփանյանին և ուրիշների, մեծ աշխատանք է ծավալում ֆակուլտետը դասախոսական կադրերով համալրելու, նյութա-տեխնիկական բազա ստեղծելու և ուսումնա-արտադրական պրոցեսը բարձր մակարդակով կազմակերպելու համար։

Կարճ ժամանակամիջոցում լրացվում ու ընդարձակվում է մինչև այդ գոյություն ունեցող բյուրեղագիտական և հանքաբանական միակ կաբինետը, ստեղծվում են հնեաբանական և քարագիտական կաբինետներ։ Ուսանողների լաբորատոր և գործնական պարապմունքների կազմակերպման համար ձեռք են բերվում բևեռացնող մանրադիտակներ, մասնագիտական տարբեր և ուսումնացուցադրական նյութեր (հավաքածուներ, քարտեզներ, աղյուսակներ, գծագրեր և այլն)։ Բացի այդ, կազմակերպվում է բյուրեղագիտական արհեստանոց, ուր պրեպարատոր Հ. Ճորիկյանը (վարպետ Հարությունը) պրոֆ. Տ. Ջրբաշյանի ղեկավարությամբ պատրաստում է բյուրեղների պարզ ու կոմբինացիոն ձևերի և բյուրեղային ցանցերի գունավոր, չգերազանցվող մոդելներ։ Ահա հենց դրանցով էլ մինչև օրս ուսանողները սովորում և յուրացնում են բյուրեղագիտության դասընթացը։ Մոդելներ, որոնք սրբությամբ պահվում են որպես մեծ երախտավորի հիշատակի անփոխարինելի մասունքներ։

1936—1937 թվականների ամռան ամիսներին պրոֆ. Տ. Ջրբաշյանը ղեկավարում է ապագա երկրաբանների առաջին դաշտային պրակտիկայի գործը։ Պրակտիկայի վայր ընտրելով երկրաբանական տեսակետից շատ հետաքրքիր և ուսանելի մերձերևանյան շրջանը (ուր նա մի շարք տարիներ կատարում էր դիտա-հետազոտական աշխատանք) նա ասիստենտ Շ. Շատվորյանի և ուսանողների խմբերի հետ շաբաթներով շրջեց Հրազդան և Ագատ գետերի ավազանների երթուղիներով, սովորեցրեց նրանց դաշտային հետազոտման մեթոդների և երկրաբանական հանույթի հիմունքները, քարտեզների և կտրվածքների կազմման և քարային նյութերի մշակման սկզբունքները։

Պրոֆ. Տ. Ջրբաշյանի դիտա-մանկավարժական գործունեությունը չի սահ-

մանափակվել միայն դասախոսական պրակտիկայով։ Նա մեծ աշխատանք է կատարել նաև ուսումնական ծրագրերի, գործնական պարապմունքների և մայրենի լեզվով մասնագիտական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ։ Մի շարք լեզուների գերազանց տիրապետումը նրան հնարավորություն է տվել զբաղվել նաև թարգմանչական և տերմինաբանական աշխատանքով։ Հիշատակման արժանի է նրա կազմած երկրաբանական տերմինների հայերեն բառարանը (շուրջ երկու հազար անուն), ընդհանուր երկրաբանության դասընթացը և Հ. Տիրելի «Քարագիտության հիմունքները», որոնք մնացին անավարտ և ցավոք սրտի չհասան մեզ։

Բազմավաստակ մանկավարժը հանդիսացել է Հայաստանի երկրաբանական ծառայության միջին սերնդի շատ ներկայացուցիչների երախտավոր ուսուցիչն ու դաստիարակը։ Նրա աշակերտներից շատերը ներկայումս գիտության և արտադրության ճանաչված գործիչներ են։

Անմոռաց ուսուցչապետի գիտա-մանկավարժական դպրոցի լավագույն սովորույթները պահպանում և շարունակում են նրա աշակերտներ, համալսարանի երկրաբանական ֆակուլտետի հնագույն դասախոսներ՝ Շ. Շատվորյանը, Ա. Գաբրիելյանը, Վ. Հասրաթյանը, Թ. Թադևոսյանը և ուրիշներ։

Ոչ պակաս արդասավոր և բեղմնավոր է եղել պրոֆ. Տ. Ջրբաշյանի նաև գիտա-հետազոտական գործունեությունը։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց, շուրջ մի տասնամյակ նա ուսումնասիրել է մեր հանրապետության մի քանի շրջանների երկրաբանական կառուցվածքը և ընդերքում տարածված ոչ մետաղային օգտակար հանածոները։

1927—1935 թվականների ընթացքում Տ. Ջրբաշյանը աշխատում է նախ Հայաստանի Ժողտնտգերխորհի լեռնային բաժնում, իսկ այնուհետև Ժողկոմխորհի կիրառական երկրաբանության և հանքաբանության գիտա-հետազոտական ինստիտուտում ինչպես նաև ՍՍՀՄ ԳԱ ՀՖ Երկրաբանական ինստիտուտում որպես լեռնային ինժեներ, խորհրդատու, որոնողա-հետազոտական ջոկատների պետ և գիտական աշխատակից։

Այդ տարիներին նա զգալի հետազոտական աշխատանքներ է ծավալում հատկապես Երևանի, Կոտայքի (Աբովյան) և Ախտայի (Հրազդան) շրջաններում, հանքային հումքի նոր աղբյուրների ու պաշարների որոնման, հայտնաբերման և հետախուզման բնագավառում։ Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփված են նրա բազմաթիվ երկրաբանական, գիտա-տեխնիկական հաշվետվություններում (պահվում են Հայկական երկրաբանական վարչության ֆոնդերում)։ Դրանցից առանձնապես հիշատակման արժանի են՝ Կոտայքի և Ախտայի շրջանների պեմզաների ու դիատոմիտների մի շարք հանքավայրերի (Էլար, Նովո-Նիկոլայևկա, Սուխոյ-Ֆոնտան, Նուռնուս և այլն) հայտնաբերմանը և հետախուզմանը (1927—1929), ինչպես նաև Ահմաղալու-Աղբաշի օնիքսի, Քեթանլուի ծծմբի, Կողբի բարիտի (1927), Ջարխեջի կոնգլոմերատի (1932), Ջրվեժի գիպսի (1933), Թալինի պեռլիտների (1929—1932) հանքավայրերին նվիրված հաշվետվությունները։

Տիգրան Ջրբաշյանի այդ հաշվետվությունները հանդիսացան այն սկզբնաղբյուրները, որոնք առաջ քաշեցին և հիմնավորեցին Հայաստանի ոչ մետաղային օգտակար հանածոների դերն ու նշանակությունը՝ հարցեր, որոնք իրենց լայն կիրառումը ստացան մեր օրերում։

Տ. Ջրբաշյանը հանդիսացել է Մերձերևանյան շրջանի առաջին հետազո-

տողներից մեկը, որը 1931—1935 թվականների ընթացքում հատկապես ուսումնասիրել է Ջրվեժ-Շորաջրիձոր-Շորաղբյուր տեղամասի երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները։ Նա հատուկ ուշադրություն է դարձրել երրորդական հասակի նստվածքների շերտագրության, հնէաբանության և նստվածքագոյացման հարցերի վրա։ Նա առաջինն էր, որ առաջ քաշեց այդ շրջանի հնարավոր նավթաբերության և աղաբերության պրոբլեմը։

Բացմավաստակ երկրաբանը զբաղվել է նաև ինժեներական երկրաբանության հարցերով, օգնել է հանրապետության մի շարք նախագծային և շինարարական կազմակերպություններին գործնական ու տնտեսական կարևոր նշանակություն ունեցող խնդիրների լուծման գործում։ Այդ ուղղությամբ նա գրել է մի շարք եզրակացություններ, որոնք նվիրված են երկրորդ Երգեսի (1931) և հարավային, հարավ-արևելյան ղռերի ջրանցքների (1931—1934) երկրաբանական պայմանների նկարագրման, Գորիսի երկրաշարժի հետևանքների (1931), Մերձերևանյան շրջանի սողանքների բնույթի և նոր բնակավայրերի կառուցման (1931—1935) հարցերին։

Պրոֆ. Տ. Ջրբաշյանի աշխատությունները (որոնց թիվն անցնում է երկու տասնյակից), չնայած գրված են շուրջ 3—4 տասնամյակ առաջ, չեն կորցրել իրենց թարմությունը և հետաքրքրությունը։ Դեռ ավելին, նրանցից շատերը իրենց առաջադրած տեսական ու գործնական եզրակացություններով միանգամայն համապատասխանում են Հայաստանի երկրաբանության առանձին հարցերի ժամանակակից պատկերացումներին և խնդիրներին։ Դրանք գրված են մեծ հետազոտողի հարուստ գիտելիքների ու փորձի, նյութի բազմակողմանի ու խոր մշակման և երկրաբանական առաջավոր մեթոդների կիրառման հիման վրա։

Նրա աշխատություն-հաշվետվությունները ձևավորված են հեղինակի համապատասխան քարտեզագրական և գծագրական նյութերով, աղյուսակներով և լուսանկարներով։

Որպես Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Երկրաբանական ինստիտուտի Կոտայքի երկրաբանական արշավախմբի պետ, նա իր կյանքի վերջին տարիներին (1935—1937) աշխատում էր «Հրազդան և Ազատ գետերի ավազանների երրորդական նստվածքների ստրատիգրաֆիան և ֆաունան» թեմայի վրա, որը նրա կատարած հետազոտությունների ամփոփումն էր։ Սակայն սա նույնպես մնաց անավարտ։

Պրոֆ. Տ. Ջրբաշյանը հիմք դրեց հանրապետության երրորդական նստվածքների պարունակող ֆաունայի և ֆլորայի բրածո մնացորդների ուսումնասիրության բնագավառին, առաջ քաշեց Ջրվեժ-Շորաղբյուր-Ողջաբերդ-Շորաջրիձոր-Մանգյուս և Քանաքեռ-Արզնի տեղամասերի, հրաբխային շերտախմբերի և լավաների մանրամասն հետազոտման ու քարտեզահանման հարցերը, դիպսի և այրվող թերթաքարերի հանքավայրերի հետազոտման անհրաժեշտությունը։

Չնայած Ջրբաշյանը չի թողել և ոչ մի տպագիր աշխատություն (իր ժամանակին այդ անհնար էր մասնագիտական պարբերական մամուլի բացակայության պատճառով), սակայն նրա թողած ձեռագիր ժառանգությունը բավական է նրա գիտական վաստակը գնահատելու համար, որը հարուստ է հայտնագործություններով և կարելի է ընդհանրացնել երկու ուղղությամբ՝

1. Շերտագրության և հնէաբանության բնագավառ—հիմնվելով շերտա-

խրմբերի տեղադրման և պարունակող կենդանական ու բուսական բրածո մնացորդների վրա, նա տվեց Մերձերևանյան շրջանի վերին հրրորդական նրստավածքների հասակային ստորաբաժանումները (միոցեն՝ սարմաթ։)

2. Ոչ մետաղական օգտակար հանածոների բնագավառ—*Մերձերևանյան շրջանում նա հայտնաբերեց պեմզաների, պեթլիտների ու դիատոմիտների մի շարք հանքավայրեր, հետախուզեց ու հիմնավորեց դրանց գործնական նշանակությունը, առաջ քաշեց այդ շրջանի հնարավոր* նավթաբերության և աղաբերության *պրոբլեմը։*

Ականավոր երկրաբան-մանկավարժ Տիգրան Ջրբաշյանը Հայաստանի երկրաբանական ծառայության ավագ սերնդի այն առաջավոր ներկայացուցիչներից մեկն էր, որն իր մի քանի ընկերների հետ (Հովհ. Կարապետյան, Պ. Ղամբարյան և ուրիշներ) մեծ գործ կատարեց 20-ական թվականների երկրորդ և 30-ական թվականների առաջին կեսերին մեր հանրապետության երկրաբանական հետազոտման և կադրերի պատրաստման բնագավառում։ Նա առաջինը «հերկեց» մեր հանրապետության երկրաբանական «խոպանը», դարձավ նրա առաջին «սերմնացանը», թողնելով գալիք սերունդներին «առատ բերքի հունձ»։

Л. А. АВАКЯН

ВЫДАЮЩИЙСЯ ГЕОЛОГ-ПЕДАГОГ

Резюме

Профессор Тигран Аршакович Джрбашян (1889—1937) был одним из первых исследователей геологии Армении, первооткрывателем ряда месторождений неметаллических полезных ископаемых и основателем геологического факультета Ереванского государственного университета.

Т. А. Джрбашян родился в гор. Ван в 1889 г. Начальное образование получил в Эрзеруме, а затем в Тифлисе в Нерсисянской школе, которую окончил в 1912 г.

С 1913 по 1918 гг. Т. Джрбашян работает учителем математики, физики и естествознания в армянских школах Вана и Тифлиса. В дальнейшем, он поступает на факультет естествознания Тифлисского университета.

В 1920 г. Т. А. Джрбашян уезжает в Париж продолжать учебу сначала в Сорбоне, а затем в Парижской Горной академии, которую оканчивает с отличием в 1924 г., получив звание горного инженера. Одновременно Т. Джрбашян работал в Минералогическом кабинете Парижского естественно-исторического музея под руководством академика Лакруа.

В 1925 г. Т. А. Джрбашян возвращается в Армению и приглашается на преподавательскую работу в Ереванский государственный университет в качестве лектора по курсам общей геологии, кристаллографии и минералогии.

В 1929 г. ему присваивается звание доцента, а в 1933 г. звание

профессора; он назначается заведующим кафедрой общей геологии и минералогии.

В эти годы Т. Джрбашян проводит большую и плодотворную научно-преподавательскую деятельность, которая тесно связана с историей Ереванского государственного университета. Он читает лекции по различным геологическим дисциплинам на сельскохозяйственном и педагогическом факультетах университета, а позже и в Ереванском политехническом институте.

В 1934 г. при непосредственном участии Т. А. Джрбашяна в Ереванском государственном университете организуется геолого-географический факультет. Т. Джрбашян назначается его первым деканом и одновременно директором научно-исследовательского института. Наряду с этим, он работает над созданием учебных программ и учебников по геологии. Блестящее знание многих европейских языков позволяет Т. Джрбашяну заниматься переводами и взяться за составление армянского терминологического словаря для геологов. К сожалению эти работы остались незаконченными и не дошли до наших дней.

Большие творческие планы Т. А. Джрбашяна в деле подготовки научных геологических кадров и дальнейшего развития научных исследований неметаллических полезных ископаемых республики остались незавершенными. По трагическому стечению обстоятельств, его жизнь безвременно оборвалась осенью 1937 года.

В течение 1927—1936 гг., работая сначала в Горном отделе ВСНХ Армении, затем в Научно-исследовательском институте Прикладной геологии и минералогии, и наконец, в Геологическом институте Армянского филиала АН СССР, Т. А. Джрбашян проводит большую научно-исследовательскую работу. Результаты этих работ обобщены в десятках научно-технических отчетах. Это изучение и описание месторождений пемзы и перлитов в Котайкском, Ахтинском и Талинском районах, месторождений высококачественных нурнусских диатомитов, декоративных джархечских конгломератов, джрвежского гипса и ангидрида, самоцветных камней и бентонитовых глин и многих других.

Работы эти послужили теми первоисточниками, которые выдвинули и обосновали неоценимую роль и большое значение неметаллических полезных ископаемых для Армении, и в большинстве случаев, не потеряли своей научной и практической ценности до настоящего времени.

Т. А. Джрбашян явился одним из первых исследователей геологии Приереванского района Арм. ССР. Им произведено стратиграфическое расчленение широко развитых здесь верхнетретичных толщ и установлены фаунистически охарактеризованые сарматские отложения. Эти же районы Т. А. Джрбашяном еще в 1927—1933 гг. были выдвинуты как наиболее перспективные в отношении нефтеносности и соленосности, что было подтверждено в результате дальнейших исследований.

Т. А. Джрбашян не оставил опубликованных работ (в то время это было невозможно, ввиду отсутствия специальной периодической печати), но его рукописное наследие имеет большую научную ценность.

Проф. Т. Джрбашян был активным общественным деятелем. Он дважды (1930 и 1933 гг.) избирался в состав исполкома Ергорсовета, был делегатом III Всесоюзного совещания геологов [Ташкент, 1928] и XVII Международного геологического конгресса [Москва, 1937].

В увековечение светлой памяти проф. Т. А. Джрбашяна, кабинет общей геологии Ереванского государственного университета назван его именем.